ՏԱՐՈՆԻ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ IX ԴԱՐԻ 50—70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԳՆԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Տարոնի Բագրատունիների իշխանությունը IX դ. առաջին կեսում Հայաստանի ամենաուժեղ պետական միավորումներից էր, 850—855 թթ. հակաարաբական հուժկու ապստամբության կենտրոնը։ Խալիֆայությունը դաժան հաշվեհարդար տեսավ առաջին հերթին հենց այս իշխանության բնակչության նկատմամբ։ Ջերբակալվեցին ու տարագրության քշվեցին Տարոնի իշխան Բագարատ Բագրատունին, որն այլևս Հայաստան չվերադարձավ, նրա որդիներ Աշոտ և Դավիթ Բագրատունիները, Խութեցի Հովնանը։

Տարոնի իշխանների գերությունից մինչև նրանց վերադարձը Հայաստանի հարավային շրջաններում քաղաքական միակ ազդեցիկ դեմքը Գուրգեն Ապուպելճ Արծրունին էր։ Վասպուրականում հաստատված արաբները նրա ջանքերով դուրս քշվեցին և Բուղան ստիպված ճանաչեց Գուրգեն Ապուպելճի իշխանությունը Վասպուրականում[1]։ Դատելով Թովմա Արծրունու տեղեկություններից, այդ ժամանակաշրջանում Գուրգեն Ապուպելճի ազդեցությունը, Վասպուրականից զատ, տարածվում էր նաև Տարոնի վրա[2]։

Ապստամբության ճնշումը խիստ ճակատագրական եղավ Տարոնի իշխանության համար, քանի որ արաբական ցեղերը, հաստատվելով Տարոնի սահմանամերձ շրջաններում, դժվարացնում էին նրա կապերը հայկական մյուս պետական միավորումների հետ, հաճախ սպառնում նրա գոյությանը։

Քննվող ժամանակաշրջանում Բյուզանդական կայսրությունը, ձեռնարկելով ակտիվ գործողություններ, արևմուտքից նույնպես սպառնում էր Տարոնի իշխանությանը։

Ապստամբության ճնշումից հետո Տարոնի Բագրատունիները Հայաստանի քաղաքական կյանքին ակտիվ մասնակցելուց զրկվեցին՝ հայոց իշխանի պաշտոնը զիջելով հյուսիսային Հայաստանում իշխող Բագրատունիների ճյուղին[3]։ 858 թ. Տարոնում իրենց ժառանգական տիրույթներում հաստատվեցին Բագարատ Բագրատունու որդիները՝ Աշոտը և Դավիթը, որոնք արաբական գերությունից ազատվել էին ու վերադարձել հայրենիք[4]։ Աշոտ Բագրատունին դարձավ Տարոնի գահերեց իշխանը (858—878)։ Նա աղբյուրներում հայտնի է հայոց իշխան, կուրապաղատ, Տարոնի իշխան հորջորջումներով[5]։

---

1 «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց» ի լոյս ընծայեալ Քերովբէ Պատկանեան, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 198։

2 Նույն տեղում, էջ 208։

3 «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 18։

4 Թովմա Արծրունի, էջ 202։

5 Նույն տեղում, էջ 218, 219։ Ղ. Ինճիճյանն առանց հիմքի կասկածում է պատմիչի՝ Տարոնի Աշոտ իշխանի կուրապաղատ կոչվելու վկայության վրա, և ավելի հավանական է համարում, որ այդ պատվանունը կրել է իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին (Ղ. Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատ. II, Վենետիկ, 1835, էջ 227)։

Գուրգեն Ապուպելեը Վասպուրականի և Տարոնի տերերի վերադարձից հետո ստիպված նրանց տիրույթները զիջեց և բավարարվեց միայն Վասպուրականի Մարդաստան գավառով[6]։ Բայց երկյուղելով հայոց իշխան Աշոտ Բագրատունուց, որը կարող էր նրան իբրև ապստամբի հանձնել արաբներին, Գուրգենը հեռացավ Մարդաստանից և հետապնդումներից խուսափելով՝ թափառականի կյանք էր վարում[7]։ Մոտավորապես 862 թ. Գուրգեն Ապուպելեը գտնվում էր Տարոնում, երբ լսեց Աշոտ Բագրատունու կողմից Վասպուրականի իշխան Գրիգոր-Դերենիկի ձերբակալման լուրը։ Չնայած այն բանին, որ նա խուսափում էր իշխանաց իշխանից, հանդես եկավ Գրիգոր-Դերենիկի պաշտպանությամբ։ Գուրգենի միջնորդությամբ Գրիգոր-Դերենիկն ազատվեց բանտից և անգամ ամուսնացավ Աշոտ Բագրատունու դստեր հետ[8]։ Հենվելով Գուրգեն Ապուպելեի՝ այս ժամանակամիջոցում Տարոնում գտնվելու փաստի վրա, Ց. Մարկվարտը դիտել է, որ նա Տարոնում իշխել է մինչև 868 թ., սրից հետո Տարոնի իշխանությունը ստանձնել են Բագարատ Բագրատունու որդիներ Աշոտն ու Դավիթը, որոնք գերությունից ազատվել ու հայրենիք են վերադարձել այդ թվականից հետո[9]։ Այս տեսակետը Ն. Ադոնցն իրավացիորեն մերժել է և ցույց տվել, որ նշված անցքերի վերաբերյալ տեղեկություններ հաղորդող Թովմա Արծրունին իշխանների գերությունից ուշ վերադառնալու մասին չի ակնարկում։ Ըստ պատմիչի նրանք հայրենիք են վերադարձել միաժամանակ՝ 858 թ., բացի Աշոտ Արծրունուց, որը Հայաստան է եկել 868 թ.[10]։

Գուրգենի՝ Մարդաստանում չմնալու, թափառական կյանք վարելու և Տարոն անցնելու վերաբերյալ Թովմա Արծրունու վկայությունն արժանահավատ է և կասկած չի հարուցում, հետևաբար, իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու հետապնդումներից խուսափելով, Գուրգենը Տարոնն ընտրել էր իբրև հուսալի ու ապահով վայր և պատսպարվել Տարոնի Բագրատունի տերերի մոտ[11]։ Քանի որ 863 թ. բյուզանդացիները հաղթել էին արաբներին ու պավլիկյաններին, և Թովմա Արծրունին մի անգամ Տարոնի, Արզնի և Անձևացիքի տեր է համարում Գուրգեն Ապուպելեին, իսկ մյուս անգամ շեշտում մոտավորապես 862 թ. նրա Տարոնում գտնվելու մասին, Ժ. Լորանը կարծել է, թե Գուրգենը 862 թ. Բյուզանդիայի օգնությամբ նվաճել է Տարոնի իշխանության մի մասը և այն իր ձեռքում պահել մինչև 878—879 թթ.[12]։ Սակայն բյուզանդաարաբական ընդհարումների վերաբերյալ տեղեկություններ տվող աղբյուրները ոչինչ չեն հաղորդում Գուրգենի, առավել ևս նրա կողմից Բյուզանդիայի օգնությամբ Տարոնի մի մասին տիրելու վերաբերյալ։ Դա սոսկ Ժ. Լորանի ենթադրությունն է։ Ինչ վերաբերում է Թովմա Արծրունուն, իրոք, նա գրում է. «Իսկ Գուրգէն՝ օր ըստ օրէ աճէր զօրութեամբ ի բազում քան թէ ի սակաւ տե-

---

6 Թովմա Արծրունի, էջ 206։

7 Նույն տեղում։

8 Նույն տեղում, էջ 207։

9 J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 305։

10 N. Adontz, Les Taronites en Arménie et a Byzance, Études Arméno-Byzantines, Lisbonne, 1965, էջ 204, ծան. 2։

11 Նույն տեղում։

12 J. Laurent, Une feodal Armenien au IXe siecle: Gourgen Ardzrouni, fils d'Abou Beldj („Revue des Études Arméniennes", tome II, fasc. 2, Paris, 1922, էջ 183)։

ղիս, զոր ի Տարօն և զոր յԱնձաւացիս և զոր յԱրզն և զոր առ ամենայն ուրեք...»[13]։ Այս տեղեկության հիմքում, պատմիչի խոստովանությամբ, ընկած են պատմական այլ աղբյուրների հաղորդումները[14]։ Նրանց՝ Տարոնը և Արզնը Գուրգենին պատկանած լինելու վերաբերյալ ակնարկի մեջ արտացոլվել են այն ժամանակաշրջանի դեպքերը, որոնք առնչվում են Գուրգենի՝ Վասպուրականում և հարավային Հայաստանում ունեցած, Բուղայի կողմից ճանաչված ու մինչև հայ նախարարների վերադարձը հարատևած իշխանության հետ։

Տարոնի իշխանների վերադարձը համընկավ մի այնպիսի ժամանակաշրջանի հետ, երբ Բյուզանդական կայսրությունը ռազմական գործողություններ սկսեց արևելքում, որոնք ամրապնդելու էին նրա սահմանները և նպաստելու հետագա հարձակումներին[15]։ 863 թ. բյուզանդական զորավար Պետրոնասը հաղթեց Մելիտինեի արաբ կառավարիչ Օմարին[16]։ Բյուզանդացիները ներխուժեցին Տարոնի իշխանության սահմանները և Աշմուշատի վրայով առաջ անցան։ Արմինիայի կառավարիչ Ալի իբն Յահյա ալ-Արմանին փորձեց Նփրկերտի և Սալսալայի ուժերով դիմակայել նրանց, բայց ապարդյուն[17]։ Բյուզանդացիների դեմ կռվի ելած Նփրկերտի ուժերի հետ միասին, ուշադրության արժանի է Սալսալայի զորքերի մասնակցության վերաբերյալ եղած հիշատակությունը։ Չնայած Սալսալան նույնանում է Հայկական Տավրոսի՝ Տարոնի Բագրատունիների իշխանության կազմի մեջ մտած հատվածի հետ[18], դժվար է եզրակացնել, թե Ալի իբն Յահյա ալ-Արմանիին բյուզանդացիների դեմ օգնում էին Տարոնի Բագրատունիների ուժերը։

IX դ. երկրորդ կեսին Հայաստանը Բագրատունիների հյուսիս-արևելյան ճյուղի քաղաքական գերիշխանության ներքո համախմբված դաշնակից իշխանությունների ամբողջություն էր[19]։ Նշված ժամանակաշրջանում Տարոնի Բագրատունիները Հայաստանի մնացած շրջանների իշխանների հետ ընդունում էին իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու գերիշխանությունը։ Սակայն Վասպուրականի ավագանին արդեն կենտրոնախույս տրամադրություններ էր դրսևորում, որը կանխելու համար իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին ստիպված էր մերձենալ նրա հետ և թեկուզ զիջումների գնով Վասպուրականը կապել իր իշխանությանը։ Այս նկատառումով նա իր դստերը կնության տվեց

---

13 Թովմա Արծրունի, էջ 288։

14 Նույն տեղում։

15 «История Византии», т. II, М., 1967, էջ 188։

16 А. Васильев, Византия и Арабы. Политические отношения Византии и арабов за время Аморийской династии, СПб., 1900, էջ 200—203։

17 E. Honigmann, Die Ostgrenze des Byzantinischen Reiches, Bruxelles, 1935, էջ 58։

18 Մեջբերումը տե՛ս А. Васильев, նշվ. աշխ., էջ 203, ծան. 1, E. Honigmann, նշվ. աշխատությանը կից «Բյուզանդական Հայաստանը 1050 թ.» քարտեզում Շիմշատից արևելք մինչև Սիմ սար լեռնաշղթան ձգվող լեռնազանգվածը կոչվում է gabal as Salsala, այսինքն լեռնաշղթա։

19 C. Toumanoff, The Background to Mantzikert, Proceedings, of the XIIIIth International Congress of Byzantine Studies, London—New York—Toronto, 1967, էջ 423, Ռ. Մաթևոսյան, Վասալա-սյուզերենական հարաբերությունները Բագրատունյաց Հայաստանում X—XI դդ. (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1977, № 10, էջ 52—53)։

Գրիգոր-Դերենիկ Արծրունուն[20]։ Ավելին, Աշոտը ոչ միայն չարգելեց նրան իր տիրույթները հարևան իշխանության հաշվին ընդարձակել, այլև զինական օգնություն էր ցույց տալիս[21]։ Աշոտ Արծրունու մահվանից հետո (875) Վասպուրականի գահերեցությունն անցավ Գրիգոր-Դերենիկին, որի հարաբերությունները Աշոտ կուրապաղատի հետ թշնամական բնույթ ստացան։

878 թ. հայ իշխանների պահանջով Արմինիայի ոստիկան նշանակված Մուհամմադ իբն Խալիդին Տարոնին մերձակա Դատվան ավանում դիմավորելու էին եկել Տարոնի իշխան Աշոտ կուրապաղատը, Վասպուրականից՝ Գրիգոր-Դերենիկը, Գագիկը, Գրիգոր անունով երկու իշխաններ, հայոց իշխանաց իշխանի եղբայր Շապուհը, Մոկաց իշխանը, Կայսիկ Աբու-լ-Վարդը և ուրիշներ[22]։ Դիմավորողները թանկարժեք նվերներ պիտի մատուցեին արաբ կառավարչին և շքախմբով նրան ուղեկցեին մինչև Դվին[23]։ Արաբ նորընծա կառավարիչը ծրագրել էր Պարտավում նստող Մուհամմադ ալ-Յամանի հետ Դվինում հաշվեհարդար տեսնել հայ նախարարների նկատմամբ։ Դեռ Դվին չհասած, հենց Դատվանում, նրանց դեմ որոգայթներ լարվեցին, որոնց մասնակցում էր նաև Կայսիկ Աբու-լ-Վարդը[24]։ Գրիգոր-Դերենիկը և Տարոնի Աշոտ իշխանը, կռահելով արաբների մտադրությունը, խույս տվեցին։ Սակայն Վասպուրականի իշխանի կարգադրությամբ վերջինիս ազգական Գրիգորը ձերբակալեց Աշոտ կուրապաղատին և հանձնեց Գրիգոր-Դերենիկի քեռորդի Հասանին։ Աշոտ կուրապաղատն արգելափակվեց Վասպուրականի Սևան ամրոցում[25]։ Ըստ Թովմա Արծրունու, Գրիգոր-Դերենիկին Աշոտ կուրապաղատի դեմ դրդել էր Կայսիկ Աբու-լ-Վարդը։ Վերջինս Վասպուրականի իշխանին հավատացրել էր, թե Աշոտը մերձենալով նոր նշանակված ոստիկանի հետ, ջանում է իրեն զրկել տալ իշխանությունից[26]։ Վերոհիշյալի մասին դրելով հանդերձ, Թովմա Արծրունին անմիջապես շեշտում է իր անիրազեկությունն այս փաստի ստույգ կամ կեղծ լինելու վերաբերյալ։ Իրականում Աշոտ կուրապաղատի ձերբակալության շարժառիթն այն էր, որ Գրիգոր-Դերենիկը պարզապես ցանկացել էր Տարոնի իշխանությունը հանձնել իր քույր Մարիամի ամուսնուն՝ Աշոտի եղբայր Դավթին[27]։ Դժվար չէ նկատել, որ նա Տարոնի իշխան էր ուզում դարձնել իր դրածոյին, որպեսզի դրանով Տարոնի իշխանությունը ենթարկեր իրեն։

Աշոտ կուրապաղատին մեկուսացնելուց հետո Գրիգոր-Դերենիկը գրավեց Տարոնի ամրոցներն ու բերդերը և Տարոնի իշխան դարձավ Աշոտ կուրապաղատի եղբայր Դավիթ Արքայիկը[28]։ Դավթին Գրիգոր-Դերենիկի միջնորդությամբ Տարոնի իշխան հաստատեց նոր նշանակված արաբ ոստիկանը[29], մի հանգամանք, որը հստակ ցույց է տալիս արաբների հետ Վասպուրականի

---

20 Թովմա Արծրունի, էջ 207։

21 Իշխանաց իշխանի որդին՝ Սահակ Բագրատունին օգնում էր Գրիգոր-Դերենիկին ընդդեմ Գուրգեն Ապուպելձի (նույն տեղում, էջ 213)։

22 Նույն տեղում, էջ 218։

23 Նույն տեղում, էջ 219։

24 Նույն տեղում, էջ 220։

25 Նույն տեղում։

26 Նույն տեղում։

27 Նույն տեղում։

28 Նույն տեղում, էջ 219—221։

29 Նույն տեղում, էջ 221։

իշխանի գործակցությունը։ Տարոնի իշխանապետի ձերբակալումն ու իշխանազրկումն այնպիսի նշանակալից երևույթներ էին, որոնց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին չմիջամտել չէր կարող։ Նույնիսկ կարծիք է հայտնվել, թե դրանք կատարվել են նրա գիտությամբ ու թելադրանքով[30]։ Թովմա Արծրունին, դժբախտաբար, այս մասին ոչինչ չի հիշատակում։ Պետք է նկատել, սակայն, որ Աշոտին ազատելու համար միջնորդեց հայոց կաթողիկոս Գեորգ Գառնեցին (877—897 թթ.)[31]։ Վերջինս նախ նամակներով դիմեց Գրիգոր-Դերենիկին, ապա անձամբ մեկնեց Վասպուրական՝ Աշոտին ազատելու։ Հավանաբար կաթողիկոսին ուղարկել էր իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին։ Համենայն դեպս, կաթողիկոսն առանց իշխանաց իշխանի գիտության չէր միջնորդի Աշոտ կուրապաղատին ազատելու համար, մանավանդ, եթե դրան դեմ լիներ իշխանաց իշխանը։ Բայց Գրիգոր-Դերենիկը մերժեց կաթողիկոսի խնդրանքը։ Նկատենք, որ նշված ժամանակաշրջանում Վասպուրականի իշխանի և իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու հարաբերությունները նախկինի նման սերտ չէին։ Գրիգոր-Դերենիկը քաղաքական գերիշխանության համար փաստորեն իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու մրցակիցն էր դարձել և կենտրոնախույս տրամադրություններ էր դրսևորում[32]։

Աշոտ կուրապաղատը գերությունից ազատվեց միայն իր խորամանկության շնորհիվ։ Նա Հասանին հավատացրեց, թե այն, ինչ Գրիգոր-Դերենիկը կատարեց իր՝ Աշոտի նկատմամբ, նույնը ծրագրում է անել նրա՝ Հասանի դեմ։ Հասանն անցավ Աշոտի կողմը և նրան ազատ արձակեց[33]։

Աշոտ կուրապաղատի հետագա գործունեության վերաբերյալ տվյալներ չկան։ Ենթադրվում է, որ նա 885 թ. մասնակցել է Գրիգոր-Դերենիկի սպանությանը։ 885 թ. Վասպուրականի իշխանի դեմ կազմակերպված դավադրության մասին հաղորդում են Թովմա Արծրունին և նրա գործի Անանուն շարունակողը։ Համաձայն Թովմա Արծրունու, Գրիգոր-Դերենիկը Վասպուրականի իշխանների ձմեռանոց՝ Մարական գավառի Ճվաշ ավանը գնալիս Հեր քաղաքի մոտակայքում շրջապատվում և սպանվում է քաղաքապետ Ապլբերսի ձեռքով[34]։ Նրա սպանությանը մեղսակից էր նաև իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին։ Ըստ Անանունի, Գրիգոր-Դերենիկին դավողներից ոմանք «ի Հայաստանն էին տանէ»[35]։ Ինչպես ճիշտ նկատել է Յ. Մարկվարտը[36], բերված հատվածում «Հայաստան տուն» հասկացությունը կարելի է նույնացնել Տարոնի հետ, քանի որ այլ առիթով Թովմա Արծրունին Տարոնը համարում է «Հայոց տուն»[37], թեև չի կարելի հաստատ պնդել, թե Անանունի «Հայաստան տուն»

---

30 Ռ. Ջենկինզը 878 թ. Աշոտ կուրապաղատի իշխանազրկումը և նրա փոխարեն եղբորը՝ Տարոնի իշխան հաստատելը, համարում է Աշոտ կուրապաղատի Բագրատունի զարմիկների՝ իշխանաց իշխան Աշոտի և մյուսների, Արծրունիների և արաբների շանթերի արդյունք („Constantine Porphyrogenitus, De Administrando Imperio", vol. II, Commentary by F. Dvornik, R. Jenkins, London, 1962, էջ 160 (այսուհետև՝ DAI)։

31 Թովմա Արծրունի, էջ 222։

32 «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց» ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1853, էջ 76, Թովմա Արծրունի, էջ 225։

33 Թովմա Արծրունի, էջ 223։

34 Նույն տեղում, էջ 226—227։

35 Նույն տեղում, էջ 263։

36 J. Markwart, նշվ. աշխ., էջ 313, ծան. 3։

37 Թովմա Արծրունի, էջ 236։

և Թովմա Արծրունու «Հայոց տունս» արտահայտությունները նույնական են։ Համենայն դեպս, աղբյուրների անորոշ վկայությունները հնարավորություն չեն ընձեռում այս հարցին սպառիչ պատասխանելու։

Թովմա Արծրունին Տարոնի իշխան, կուրապաղատ Աշոտ Բագրատունուն անվանում է «Հայոց իշխան»[38]։ Հայտնի է, որ հայոց իշխանին (որը IX դ. երկրորդ քառորդից սկսեց կրել իշխանաց իշխան տիտղոսը), արաբական տիրապետության ժամանակ հանձնարարվել էր Հայաստանի կառավարչի պաշտոնը։ Նա հրկրի մյուս իշխանների նկատմամբ գահերեց էր։ Քննվող ժամանակաշրջանում Հայաստանի կառավարումը վստահված էր իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն, որը 885 թ. հռչակվեց հայոց թագավոր։ Հետևաբար, երկու Աշոտ Բագրատունիները չէին կարող միաժամանակ նույն պաշտոնը գրավել։ Այս ակներև հակասությունից խուսափելու համար հետազոտողներից ոմանք գտնում են, որ Տարոնի Աշոտ Բագրատունուն հայոց իշխան հռչակեց Բյուզանդական կայսրությունը, քանի որ նա կայսրությունից կուրապաղատություն էր ստացել[39], չնայած Բյուզանդիայի կողմից Աշոտին հայոց իշխան ճանաչելու մասին աղբյուրներում որևէ վկայություն չկա։ Սակայն Թովմա Արծրունու վկայությունն անհավանական է դարձնում Տարոնի իշխանի՝ Բյուզանդական կայսրության կողմից հայոց իշխան ճանաչվելու վարկածը։ Պատմիչը անդրադառնալով Գրիգոր-Դերենիկի՝ Տարոնի գործերին միջամտելու մտադրությանը, գրում է, որ նա ցանկանում էր իր փեսա Դավիթ Արքայիկին դարձնել Տարոնի իշխան, որով նա կոչվելու էր նաև հայոց իշխան[40]։ Այդպես էլ եղավ։ Դավիթը դարձավ Տարոնի և հայոց իշխան։ Կասկածից վեր է, որ տվյալ դեպքում Դավթի՝ հայոց իշխան կոչվելը կապված է նրա՝ Տարոնի իշխան լինելու հետ։ Այսպիսով, այստեղ քննվող հայոց իշխան հասկացությունը կապված է ոչ թե կոնկրետ որևէ անձի, այլ՝ Տարոնի իշխան դարձող յուրաքանչյուրի հետ։ Դավթի՝ Տարոնի իշխան, հետևաբար հայոց իշխան լինելը Գրիգոր-Դերենիկի միջնորդությամբ օրինականացվեց խալիֆայության ներկայացուցչի կողմից[41], ուստի այն պատկանում էր արաբական կարգության իրավասությանը։ Ըստ երևույթին Աշոտ կուրապաղատը համանման ձևով Տարոնի իշխան է դարձել, որի հետ և կոչվել հայոց իշխան՝ խալիֆայության գիտությամբ, առանց Բյուզանդիայի միջամտության։

Տարոնի իշխանը, տվյալ դեպքում Աշոտ կուրապաղատը, թեև կոչվում էր հայոց իշխան, սակայն Հայաստանի մյուս իշխանների նկատմամբ գերադաս չէր և նրա իրավասությունները տարածվում էին միայն Տարոնի իշխանության սահմաններում։ Աշոտի հայոց իշխան հորջորջումը, ամենայն հավանականությամբ, տիտղոսային էր՝ զուրկ համահայաստանյան մասշտաբի որևէ պաշտոն արտահայտելուց։ Կրելով այդ տիտղոսը, նա գուցե կամենում

38 Նույն տեղում, էջ 218։

39 J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, Paris, 1919, էջ 272, ծան. 10, C. Toumanoff, The Background to Mantzikert, էջ 424։ Մոտավորապես նույն կարծիքին է Ռ. Ջենկինզը, ըստ որի, 872 թ. հետո, երբ Վասիլ Ա-ն նվաճեց Տեփրիկեն, Աշոտը վարեց բյուզանդամետ քաղաքականություն, կայսրության կողմից ճանաչվեց իշխանաց իշխան և կուրապաղատ (DAI, էջ 160)։ Սակայն Տարոնի Աշոտ կուրապաղատը իշխանաց իշխան տիտղոսը չի ունեցել, ինչպես կարծում է նա։ Ռ. Ջենկինզը նույնացնում է հայոց իշխան ու իշխանաց իշխան հասկացությունները (տե՛ս նույն տեղում, նաև Դավիթ Արքայիկի կապակցությամբ)։

40 Թովմա Արծրունի, էջ 220։

41 Նույն տեղում, էջ 221։

էր ընդգծել հայոց իշխանի պաշտոնի նկատմամբ իր ժառանգական իրավունքները։

Տարոնի Աշոտ Բագրատունու և նրա իշխանության վերաբերյալ սկզբնաղբյուրների տեղեկությունները խիստ սակավ են։ Միայն հայտնի է, որ նրան բյուզանդական արքունիքը շնորհել է կուրապաղատի տիտղոս, որին մինչ այդ արժանացել են նաև հայոց իշխաններ Դավիթ Սահառունին (635—638), Վարազտիրոց Բագրատունին (645), Համազասպ Մամիկոնյանը (654—661) և Սմբատ Բագրատունին (693—726)։

Հայոց իշխանների այս խմբից բացի, մեկ այլ խումբ բյուզանդական արքունիքից ստացել է պատրիկի տիտղոս։ Կուրապաղատության տիտղոսին արժանացել են միայն հայ և վրաց իշխանները, իսկ Լազիկայի և Աղվանքի իշխանները երբեք չեն արժանացել այդ պատվին[42]։

Կուրապաղատություն շնորհվել է այն իշխաններին, որոնք նշանակալից դեր են խաղացել Հայաստանում Բյուզանդիայի ազդեցության տարածման և ամրապնդման գործում։ Միաժամանակ դա հայ իշխանների համակրանքը շահելու միջոց էր։ Սակայն չի կարելի ասել, թե նման ձևով կայսրությունը միշտ իր նպատակին հասել է։ Սմբատ Բագրատունին, խզելով իր կապերը Բյուզանդիայի հետ, 709 թ. ընդունեց արաբական կողմնորոշում[43]։ Այդ ժամանակաշրջանից ի վեր, մինչև 850-ական թվականները, այսինքն մինչև Տարոնի Աշոտ Բագրատունին, Հայաստանի իշխաններից ոչ մեկը չարժանացավ կուրապաղատի տիտղոսին։ Նշված ժամանակաշրջանում Հայաստանը և Վրաստանը գտնվում էին խալիֆայության գերիշխանության ներքո, երբ վրաց Աշոտ Ա Բագրատունին արժանացավ այդ պատվին[44]։

IX դ. երկրորդ կեսին, երբ Բյուզանդիան փորձեց ակտիվ քաղաքականություն վարել Հայաստանում, սովորույթը վերականգնվեց, և Հայաստանի իշխաններից առաջինը կուրապաղատ դարձավ Տարոնի իշխան Աշոտ Բագրատունին։ Ենթադրվում է, թե նա այդ տիտղոսին է արժանացել 863 թ. կամ 870-ական թվականներին՝ պավլիկյանների դեմ բյուզանդացիների ձեռնարկած արշավանքների ժամանակ[45]։

Տարոնի իշխանին բյուզանդական տիտղոսի շնորհումը՝ նրա և կայսրության սերտ շփման պայմաններում անգամ չի նշանակում, թե այս իշխանությունը Բյուզանդիայից վասալական կախվածության մեջ էր, ինչպես կարծել են որոշ հետազոտողներ[46]։ Հարաբերությունների այս կարգն ավելի շուտ ապացույց է կայսրության և Տարոնի իշխանության միջև եղած դիվանագիտական կապերի։

Միջնադարում պետություններն ընդհանրապես, իսկ Բյուզանդիան հատկապես, կարևոր նշանակություն են տվել այլ երկրների նկատմամբ իրենց

---

[42] C. Toumanoff, Studies in Christian Caucasian History, Georgetown, 1963, էջ 388—389, ծան. 23, հմմտ. նույնի The Background to Mantzikert, էջ 415։

[43] «Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 36։

[44] C. Toumanoff, Studies in Christian Caucasian History, էջ 203, 486։ Գրականության մեջ սխալմամբ նշվում են նաև այլ իշխանների անուններ, որոնք իբր արժանացել են կուրապաղատի տիտղոսին։

[45] N. Adontz, նշվ. աշխ., էջ 205։

[46] J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, էջ 272։ ծան. 10, C. Toumanoff, The Background to Mantzikert, էջ 424։

ագրեսիաների գաղափարական հիմնավորմանն ու օրինականացմանը։ Բյուզանդիան, Հռոմեական կայսրությունից ժառանգելով տիեզերապետության գաղափարը, ձգտում էր իր գերիշխանությունը տարածել այլ երկրների վրա։ Նրա գաղափարախոսներն ընդգծում էին Բյուզանդական կայսրության գլխավորությամբ պետությունների և իշխանությունների հիերարխիկ սիստեմի՝ οἰκουμένη-ի գոյությունը։ Դա «հոգևոր-ազգակցական» կապերով պայմանավորված մի յուրահատուկ «գերդաստան» էր, որի գլուխ կանգնած էր բյուզանդական կայսրը՝ «գերդաստանի» «հոգևոր հայրը»։ Ըստ կարևորության՝ հիերարխիայի հաջորդ աստիճաններում էին կայսեր «հոգևոր եղբայրները», «հոգևոր զավակներն» ու «բարեկամները»[47]։ Այս, ինչպես նաև բյուզանդական արքունիքի կողմից մշակված այլ տիտղոսների կարգը և գրությունների հատուկ ձևերը, որոնք տրվում կամ ուղղվում էին օտար իշխաններին և թագավորներին, բյուզանդական տեսանկյունով ենթադրվում էր ինչ որ չափով վերջիններիս կախվածությունը կայսրությունից։

Բյուզանդական պետության քաղաքական կոնցեպցիան ցայտուն դրսևորվում է նրա ճակատագրով նախանձախնդիր Կոստանդին VII Ծիրանածին կայսեր այն ձևակերպումով, որ կայսրության կողմից նշանակված կամ տիտղոս ստացած օտար կառավարիչները բյուզանդական կայսրի ծառաներն են համարվում, հետևաբար բյուզանդական տիրապետության տակ գտնվող ամրոցները, քաղաքներն ու գյուղերը նույնպես նրա սեփականությունն են[48]։ Ուստի Տարոնի իշխանին կուրապաղատության շնորհումով կայսրությունը ձգտում էր նրան կտրել Բագրատունիների հյուսիս-արևելյան ճյուղի՝ հայկական իշխանությունները միավորելու քաղաքականությունից, օրինականացնում էր իր ագրեսիվ պլանները Տարոնի իշխանության նկատմամբ[49]։

Աշոտ Բագրատունի կուրապաղատի օրոք Տարոնի իշխանության և Բյուզանդիայի փոխհարաբերությունները, ինչպես տեսնում ենք, գծագրվում են ընդհանուր ձևերով։ Այդ կապերի մեջ խորանալու անհնարինությունը պայմանավորվում է կոնկրետ փաստերի բացակայությամբ։ Այս տեսակետից արժեքավոր է ֆրանսիացի բյուզանդագետ Ժ. Դարուզեսի հրատարակած՝ Փոտ պատրիարքի (858—867, 877—886) հայերին ուղղված նամակներից մեկը[50]։ Այդ նամակից՝ վերնագրված «Ընդդեմ թեոպասխիտների (աստվածաչարչարների) աղանդի», տեղեկանում ենք, որ Կ. Պոլսի պատրիարքը փորձել է վերացնել Տարոնի և Բյուզանդիայի միջև գոյություն ունեցած դավանաբանական

---

47 Կ. Ն. Յուզբաշյան, Բագրատունյաց շրջանի Հայաստանը միջազգային իրավունքի տեսանկյունից («Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 1, էջ 42)։ Ըստ մեկ այլ տարբերակման կայսեր «զավակները» նրա «եղբայրներից» հետո էին (И. П. Медведев, Империя и суверенитет в средние века (на примере истории Византии и некоторых сопредельных государств. «Проблемы истории международных отношений», сборник статей памяти академика Е. В. Тарле, Ленинград, 1972, էջ 416—417)։

48 Կոստանդին Ծիրանածին, Կայսրության կառավարման մասին («Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», գիրք 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 11)։

49 C. Toumanoff, The Background to Mantzikert, էջ 424։

50 J. Darrouzès, Deux lettres inédites de Photius aux Arméniens („Revue des Études Byzantines", tome XXIX, Paris, 1971, էջ 140—158)։ Ժ. Դարուզեսի հրատարակած բնագրերի վերաբերյալ տե՛ս Կ. Ն. Յուզբաշյանի դիտողությունները («Византийский временник», т. 38, М., 1977, էջ 246—248)։

անջրպետը։ Այդ կապակցությամբ նա որոշ հաջողություններ հասել է, քանի որ «տարոնացիները, որոնք ապրում են Զորրորդ Հայքում, ուղղափառներ (քաղկեդոնական—Գ. Գ.) են դարձել»[51]։ Այսպիսով, քաղկեդոնականությունն աշխուժանում էր Տարոնում և նրան մերձակա Զորրորդ Հայքում[52], լրջորեն սպառնալով հայկական այս իշխանությանը։

Բյուզանդիան, որի համար կարևոր նշանակություն ուներ իր նվաճումների օրինականացումը, ցանկացած պահին կարող էր ոտնձգություն կատարել Տարոնի իշխանության նկատմամբ՝ իր դավանակիցների պաշտպանության քողի ապակ։

КНЯЖЕСТВО ТАРОНСКИХ БАГРАТИДОВ В 50—70-х ГОДАХ IX ВЕКА

ГНЕЛ ГРИГОРЯН

Резюме

В 858 г. князем Тарона стал возвратившийся из арабского плена Ашот Багратуни, носивший титул князя Армении, фактически же князем Армении являлся Ашот Багратуни Ширакского феодального дома.

Некоторые исследователи считают, что Таронское княжество находилось в вассальной зависимости от Византии, поскольку князь Ашот Багратуни носил титул куропалата. Однако византийский титул правителя Тарона в этот период свидетельствует лишь о дипломатических связях и агрессивных намерениях византийского двора относительно Тарона. Недавно опубликованное византиноведом Ж. Дарузесом адресованное армянам письмо константинопольского патриарха Фотия (в нем говорится об активизации халкидонитов в Тароне) также подтверждает это обстоятельство.

---

51 J. Darrouzès, նշվ. աշխ., էջ 141։

52 Զորրորդ Հայքից որոշ գավառներ՝ Խորձյանքը և Հաշտյանքը մտնում էին Տարոնի իշխանության կազմի մեջ (տե՛ս Ս. Տ. Երեմյանի «Հայաստանը և հարևան երկրները 855—953 թթ.» քարտեզը («Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976)։